

Տ. ՕՇԱԿԱՆ ԱԲԵՂԱ ԳՅՈՒԼԳՅՈՒԼՅԱՆ



Ծնվել է 1960 թ. հունիսի 18-ին, Բեյրութում: Ավազանի անունն է Գևորգ: Նախնական կրթությունն ստացել է Վահան Թեքեյան ազգային վարժարանում:

1977 թ. սեպտեմբերին ընդունվել է Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության դպրեվանք:

Երկու տարի ուսանելուց հետո, 1979 թ. սեպտեմբերին, ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: Մեկ տարի անց մեկնել է Բեյրութ և որոշ ընդհատումից հետո, 1982 թ., վերադարձել Ս. Էջմիածին և շարունակել ուսումը հոգևոր ճեմարանում:

1986 թ. փետրվարի 14-ին, ձեռամբ Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1986 թ. ավարտել է հոգևոր ճեմարանը՝ ավարտաճառ ներկայացնելով «Ստեփանոս Սյունեցու մատենագրական ժառանգության մի քանի էջեր» թեմայով: